Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2021. «Վայոց ձորում երեք մանկական զարգացման կենտրոնների վերանորոգման և բարելավման» ծրագրի եզրափակիչ արարողություն

2022թ. դեկտեմբերի 9-ին Վայքի զարգացման կենտրոնում տեղի ունեցավ «Վայոց ձորում երեք մանկական զարգացման կենտրոնների վերանորոգման և բարելավման» ծրագրի մինչև 83,597 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության եզրափակիչ արարողությունը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիման, Վայոց Ձորի մարզպետ պարոն Արարատ Գրիգորյանը, Վայք համայնքի ղեկավար պարոն Մխիթար Մաթևոսյանը, Մանկական զարգացման կենտրոնի տնօրեն տիկին Լուսինե Սիմոնյանը, ինչպես նաև այլ շահառուներ, այդ թվում՝ քաղաքապետարանի ղեկավարներ, կազմակերպության աշխատակազմից ներկայացուցիչներ, կենտրոնի սաները և նրանց ծնողները:

Ծրագրի նպատակն էր ապահովել կյանքի դժվարին հանգամանքներում (հաշմանդամություն, աղքատություն, ընտանեկան բռնություն, չարաշահումներ) հայտնված երեխաների առողջ զարգացումը և սոցիալական հարմարվողականությունը՝ վերանորոգելով և բարելավելով խաղահրապարակներն ու խաղասենյակները Վայոց Ձորում Մանկական զարգացման հիմնադրամի կողմից ղեկավարվող երեք մանկական զարգացման կենտրոններում: Սա կնպաստի տարածաշրջանում կրթության որակի և բարեկեցության բարձրացմանը: Արդյունքում ծրագրից կօգտվի մոտ 300 երեխա:

Վայքի կենտրոնս բացման արարողությունը

Ծանոթացում երեխաների վերանորոգված սենյակներին

Վայքի կենտրոնի նորաստեղծ խաղահրապարակը

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը